Փեյո Յավորով

ԵՐԿՈՒ ՍԻՐՈՒ՛Ն ԱՉՔԵՐ

Երկու սիրուն աչքեր: Մի մանկական հոգի՝
Այս աչքերում սիրուն,
Երաժշտություն – ճաճանչ:

Չունեն պահանջք, ոչ էլ՝ խոստում ...
Հոգի'ս է պաղատում, փոքրիկս,
Հոգիս է պաղատում:
    Կարիք ու կիրք՝ շուտով
    Կշղարշեն նրանց
    Մեղքի եւ ամոթի քողով:
    Մեղքի եւ ամոթի քողով
    Չե'ն շղարշի նրանց
    Կարիք ու կիրք՝ շուտով:
Հոգիս է պաղատում, փոքրիկս,
Հոգիս է պաղատում...
Չունեն պահանջք, ոչ էլ՝ խոստում:

Երկու սիրուն աչքեր,
Երաժշտություն, ճաճանչ
Այդ աչքերում սիրուն: Մի մանկական հոգի:

Թարգմանեց՝ Միհրան ՊՈՂՈՍՅԱՆ

Превод на арменски: Арамаис Бабаян